Շրջակա միջավայրի նախարարության
գլխավոր քարտուղար
պարոն Գ.Գուլյանին

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. **Քաղաքացիական ծառայողի անունը, ազգանունը.**
   Ոսկեհատ Իսախանյան
2. **Զբաղեցրած պաշտոնը.**
   Կլիմայական քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ
3. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   Այցելություն Տաջիկստանի Հանրապետություն՝ 3-7 հուլիսի 2023 թվական.
4. **Հրավիրող կողմը (առկայության դեպքում).**
   ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայի քարտուղարություն (UNFCCC secretary)
5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**
   Միավորված ազգերի կազմակերպության Կլիմայի փոփոխության շրջանակային կոնվենցիայի (UNFCCC) քարտուղարության, ինչպես նաև Ազգային մակարդակով սահմանված գործողությունների (ԱՍԳ) գործընկերության (NDC Partnership) աջակցության խմբի կողմից կազմակերպված Կենտրոնական Ասիայի և Հարավային Կովկասի երկրների կլիմայի ֆինանսավորման ֆորումի ֆորումի (այսուհետ՝ Ֆորում) նպատակն էր՝
   - մասնակից երկրներին ներկայացնել Տաջիկստանի ԱՍԳ իրականացման և ներդրումային ծրագրերը և կազմակերպել ԱՍԳ գործընկերության կոլեգիալ հանդիպում-քննարկումներ,
   - ընդլայնել Կենտրոնական Ասիայի և Հարավային Կովկասի երկրների փորձագետների և գործընկեր կազմակերպություններ գիտելիքները, հմտությունները և նպաստել փորձի փոխանակմանը կլիմայի փոփոխության դեմ պայքարելուն ուղղված ֆինանսների մոբիլիզացիայի և կլիմայի ֆինանսավորման հասանելիության ոլորտում,
   - Կանաչ կլիմայի հիմնադրամի (GCF), Գլոբալ էկոլոգիական հիմնադրամի (GEF) և Հարմարվողականության հիմնադրամի (AF) աջակցությամբ մշակել տարածաշրջանային նախագծերի առաջարկներ:

Հանդիպմանը մասնակցում էին Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի, Ղազախստանի, Ղրղզստանի, Տաջիկստանի, Թուրքմենստանի, Ուզբեկստանի և Մոնղոլիայի, միջազգային կլիմայական ֆոնդերի, միջազգային տարածաշրջանային կազմակերպությունների (GIZ, UNDP, ADB) ներկայացուցիչներ, փորձագետներ:

6. **Քննարկված թեմաները (հարցերը).**

- ✓ Տաջիկստանի ԱՍԳ իրականացման և ներդրումային ծրագրերի ներկայացում, քննարկում,
- ✓ ԱՍԳ գործընկերության կողմից ԱՍԳ պլանավորման ուղեցույցի ներկայացում,
- ✓ ԱՍԳ ներդրումների պլանավորման, կարիքների բացահայտման, առաջնահերթությունների սահմանման և ներդրումների մոբիլիզացիայի համար անհրաժեշտ կարողությունների ներկայացում,
- ✓ կառավարման տարբեր մակարդակներում և ոլորտներում կայուն և ներառական ԱՍԳ ներդրումային ինստիտուցիոնալ շրջանակների սահմանում, ԱՍԳ-ի առաջնահերթ գործողությունների պլանավորման/իրականացման դյուրացում, շահագրգիռ կողմերի ներգրավում, առաջընթացի մոնիտորինգ և հաշվետվայնություն,
- ✓ ներդրումների կարիքների նույնականացում, ԱՍԳ ներդրումային պլանավորման համար մասնակցային և ներառական գործընթացի միջոցով ներդրումային կարիքների բացահայտում, այդ թվում՝ ԱՍԳ նպատակադրումների, դրա իրականացմանն ուղղված քաղաքականությունների, ներառյալ ազգային հարմարվողականության ծրագրերի, ցածր արտանետումներով երկարաժամկետ ռազմավարության իրականացման և կայուն զարգացման նպատակներին հասնելու համար ֆինանսավորման կարիքների բացահայտում,
- ✓ ԱՍԳ ներդրումների, իրականացման պլանների և ֆինանսավորման աղբյուրներ ներգրավելու խոչընդոտների բացահայտում,
- ✓ ԱՍԳ մոնիտորինգի և հաշվետվության համար ինստիտուցիոնալ շրջանակները, գործիքներն ու ռազմավարությունը վերանայելու և վերջինիս կատարելագործելուն միտված անհրաժեշտ ներդրումային դաշտի շրջանակների ներկայացում,
- ✓ երկրների կլիմայական ֆինանսական հասանելիության և դրանց մոբիլիզացման համար համագործակցության հնարավոր ոլորտների բացահայտում,
- ✓ տարբեր ֆինանսական հաստատությունների և մասնավոր հատվածի նախագծերի մշակման գործընթացների ներկայացում՝ ընդգծելով նախագծերի ներկայացման գործընթացի յուրաքանչյուր փուլի նշանակությունը, անհրաժեշտ պահանջները՝ ուրվագծելով հիմնական դերակատարների շրջանակը, ներառյալ՝ ծրագրերն իրականացնող կազմակերպությունների հավատարմագրումը,
- ✓ կլիմայական հայեցակարգի հիմնավորման՝ ռացիոնալի ձևավորման վերաբերյալ գիտելիքների տրամադրում՝ շեշտադրելով դրա՝ որպես հիմնական բաղադրիչի

կարևորությունը կլիմայական ծրագրերի մշակման, մասնավորապես, հարմարվողականության, կլիմայական դիմակայունության բարձրացմանն ուղղված նախագծերի առկա ֆինանսավորմանը հասանելիություն ստանալու հարցում,

- ✓ փոփոխության տեսության (ToC) ներկայացում, համապատասխան ֆոնդերի հետ այդ տեսության հնարավոր կապերի վերհանում, կլիմայական նախագծերի մշակման, գնահատման, իրականացման ընթացքում փոփոխությունների տեսության օգտագործում,
- ✓ նախագծային առաջարկներ մշակելիս, գենդերային և սոցիալական նկատառումների՝ ներառյալ բազմակողմանի խորհրդատվության գործընթացների կարևորությունը նպատակային և ներառական ծրագրեր մշակելու հարցում,
- ✓ շրջակա միջավայրի և համայնքների վրա ծրագրի հնարավոր բացասական ազդեցությունները նվազեցնելու և կանխելու նպատակով բնապահպանական և սոցիալական երաշխիքների կիրառում,
- ✓ կլիմայական ծրագրեր մշակելիս տարբեր ռիսկերի բացահայտում, դրանց մեղմացում և կառավարում,
- ✓ մասնավոր հատվածի կլիմայի ֆինանսավորման մոբիլիզացում, կլիմայի ֆինանսավորման գործիքների և խառը ֆինանսավորման դերի ներկայացում,
- ✓ կլիմայական ծրագրերի ֆինանսական իրագործելիության, ծրագրի կենսունակության որոշում և ներդրումային շրջանակի ստեղծում:

**7. Հանդիպումները, ելույթները.**

Ֆորումի շրջանակներում մասնակիցներին ներկայացվել են Տաջիկստանի ԱՍԳ իրականացման պլանը և կլիմայական ֆինանսավորման պլանը: Այնուհետև քննարկվել է ԱՍԳ գործընկերության ներդրումների պլանավորման հարցը: ԱՍԳ ներդրումների հիմնական կարիքները բացահայտելու և առաջնահերթություններ սահմանելու գործընթացի համատեքստում փորձի փոխանակման նպատակով ֆորումի բոլոր մասնակիցները ներկայացրել են իրենց երկրների համապատասխան ընթացակարգերը, ներկայացվել է համապատասխան ներդրումները մոբիլիզացնելու գործիքակազմը:

Ֆորումի 2-րդ օրը մեկնարկել է կլիմայական գործողությունների ֆինանսավորման ինտերակտիվ աշխատաժողովը, որի շրջանակներում տարածաշրջանային 9 երկրներից յուրաքանչյուրը ներկայացրել է կլիմայի փոփոխության դեմ պայքարում առկա կարիքները և մարտահրավերները՝ տարածաշրջանային համագործակցության հնարավոր ոլորտներն ուրվագծելու նպատակով:

Վերոնշյալ նիստում ելույթ եմ ունեցել «Հայաստանի Հանրապետության կլիմայական ֆինանսավորման ռազմավարության կարիքներն ու մարտահրավերները» թեմայով: Սահիկաշարով ներկայացրել եմ կլիմայական ռազմավարության հիմնական քաղաքական ուղղությունները, հնարավոր ինստիտուցիոնալ բացերը, դրանց վերհանման և անհրաժեշտ լուծումների ուղղությամբ տարվող աշխատանքները, նպատակադրումները: Նկարագրել

եմ կլիմայական ֆոնդերի շրջանակը, որոնց ֆինանսավորման շնորհիվ Հայաստանում իրականացվել են կլիմայի մեղմման և հարմարվողականության ուղղված տարբեր ծրագրերի: Ներկայացրել եմ Հայաստանի ազգային մակարդակով սահմանված գործողությունների վերանայված տարբերակը, անդրադառնալով նախագծային փուլում գտնվող ԱՍԳ իրականացման և ներդրումային պլաններին, ԱՍԳ ֆինանսավորման ռազմավարության նախագծերին:

Ամփոփելով 9 երկրների կլիմայական ֆինանսավորման կարիքներն ու մարտահրավերները՝ աշխատաժողովի մասնակիցներին ներկայացվել են ծրագրային հայեցակարգերի մշակման ընթացակարգերը և պահանջները: Մասնավորապես, անդրադարձ է կատարվել հետևյալ թեմաներին.

- կլիմայական գործողությունների անհրաժեշտության հիմնավորման մշակման ընթացակարգը՝ տարածաշրջանային համատեքստում,
- փոփոխության տեսության (Theory of Change) հիմնական ասպեկտները և ծրագրային հայեցակարգերում վերջինիս արդյունավետ ինտեգրման եղանակները,
- սոցիալական և գենդերային բաղադրիչների ուսումնասիրությունը, ռիսկերի գնահատումը,
- մասնավոր հատվածի ներգրավումը ծրագրային միջամտություններում,
- ծրագրերի նախնական ֆինանսատնտեսական վերլուծությունը:

Ֆորումի շրջանակներում կազմվել են աշխատանքային խմբեր՝ առանձնացված չորս թեմատիկ գաղափարների (վաղ ազդարարման համակարգերի ներդրում և զարգացում, խելացի գյուղատնտեսություն, գյուղական կայուն զարգացում և տեղում կառավարվող հարմարվողականություն, կանաչ պարտատոմսերի թողարկման խթանում) հիմքով տարածաշրջանային ծրագրերի առաջարկ մշակելու նպատակով:

Ընդգրկվելով «Խելացի գյուղատնտեսություն և անտառային տնտեսություն և այլ հողօգտագործում» (Smart agriculture and AFOLU) տարածաշրջանային նախագծի առաջարկ մշակող խմբում, ներկայացրել եմ խելացի գյուղատնտեսության հիմնադրման համար անհրաժեշտ ժամանակակից տեսությունները և դրանց մասնակից երկրների կողմից հավանական օգտագործման հնարավորությունները: Ներկայացրել եմ բազմաթիվ առաջարկություններ տարածաշրջանային նախագծի առաջարկի ձևավորման տարբեր փուլերի ընթացքում և առաջարկը վերջնական տեսքի բերելու համար: Հայկական պատվիրակության մյուս անդամներն ընդգրկվել են «Կանաչ պարտատոմսեր» տարածաշրջանային առաջարկի համար ձևավորված խմբում, որի նախագծային առաջարկը համարվեց ֆորումի տարածաշրջանային առաջարկներից լավագույնը:

Պանելային քննարկումների ընթացքում հայկական պատվիրակության անդամները ակտիվ մասնակցել են օրակարգային հարցերի քննարկմանը: Ֆորումի ընթացքում մասնակիցների կողմից արվել են 4 տարածաշրջանային նախագծերի առաջարկներ, որոնց շուրջ պետք է ընթացել են հետագա քննարկումները:

8. **Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Ֆորումի վերջում կազմակերպիչները նշեցին, որ տարածաշրջանային առաջարկները կուսումնասիրվեն ֆինանսական ֆոնդերի կողմից և մեկ տարվա ընթացքում կհստակեցվի դրանց իրականացման ուղղությունները, շահագրգիռ կողմերի շրջանակը և առաջարկը կյանքի կոչելու համար ֆինանսավորման հնարավորությունները: Արդյունքները կներկայացվեն մեկ տարի հետո կլիմայական ֆինանսավորման վերաբերյալ հաջորդ ֆորումի ընթացքում:

Նախատեսվում է հետագայում տարածաշրջանային երկրների հետ վարել բանակցություններ՝ ծրագրերի մշակման գործընթացն ամփոփելու և դրանք համապատասխան հիմնադրամներին ներկայացնելու նպատակով: Ծրագրային հայեցակարգերի մշակման գործընթացում հայաստանյան պատվիրակությունը առաջարկել է ներգրավել փորձագետներ Հայաստանից:

Աշխատաժողովի վերջին օրը մասնակիցներն այցելել են Նուրեկ՝ ծանոթանալու Տաջիկստանում և Կենտրոնական Ասիայում ամենախոշոր հիդրոէլեկտրակայանի գործունեությանը և կանաչ էլեկտրաէներգիայի ստացման մեխանիզմին:

9. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները:**

Ֆորումի կազմակերպիչները հավաքագրելով աշխատաժողովին մասնակից երկրների կլիմայական ֆինանսավորման կարիքների գնահատման, ԱՍԳ պլանի, կլիմայի հարմարվողականության և մեղմման ծրագրերի արդյունավետ իրականացման մարտահրավերները, ընդգծեցին, որ կուսումնասիրվի Կենտրոնական Ասիայի և Հարավային Կովկասի երկրների առկա բացերը կրճատելու և արդյունավետ լուծումներ առաջադրելու հնարավորությունները:

**Գործուղվող անձ** **Ոսկեհատ Իսախանյան**

12.07.2023